



ԼՆՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
NATIONAL STATISTICAL SERVICE OF
NAGORNO-KARABAKH REPUBLIC

Վիճակագրական հրատարակումների

ՀԱՄԱՑԱՆԿ

2011

CATALOGUE

of Statistical Publications

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-2011- STEPANAKERT

Հասցեն՝
 ԼՂՀ ազգային վիճակագրական
 ծառայություն, Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետություն, ք. Ստեփանակերտ,
 Ազատամարտիկների 5ա

Address: *National Statistical Service of NKR,
 Nagorno-Karabakh Republic,
 Azatamartikneri 5a Street*

Հեռախոս
Phone (3749) 4 33 72
 Էլեկտրոնային և
 Ինտերնետ կապ
E-mail and Internet E-mail: info@stat-nkr.am
 Գրադարան Internet: http://www. stat-nkr. am

ԼՂՀ ազգային վիճակագրական
 ծառայություն, հանրության համար
 գրադարանը բաց է երկուշաբթի օրվանից
 մինչև ուրբաթ 9.00-ից 18.00-ը,
 Հեռախոս (3749) 4 35 34

Library *Address is: National Statistical Service of
 NKR, The library is open to the general
 public: Monday to Friday from 9.00 a.m. to
 18.00 p.m.
 Phone: (3749) 4 35 34*

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2011թ.
National Statistical Service of NKR, 2011

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության առաքելությունն է հանրության համար պաշտոնական վիճակագրության հավաքագրումը, հրապարակումը և տարածումը:

Տվյալների որակը, սպառողների վստահությունը և պրոֆեսիոնալ անկախությունը կան և կմնան մեր նախապատվային խնդիրները:

The mission of the National Statistical Service of Nagorno-Karabakh Republic is to collect, publish and disseminate official statistics for public use.

Data quality and users' trust, professional independence are and will remain our priority tasks .

Հարգելի ընթերցող, վիճակագրական տեղեկատվություն սպառողների համար վիճակագրական հրատարակումներից ավելի արդյունավետ օգտվելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատառումով, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ԼՂՀ ԱՎԾ) նախաձեռնել է «**Վիճակագրական հրատարակումների համացանկ, 2011**»-ի մշակումն ու հրատարակումը:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ ԼՂՀ տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրն է, որը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագիրը մշակվում է ԼՂՀ ԱՎԾ կողմից վիճակագրական տեղեկատվություն սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա և այլ բաղադրատարրերի հետ միասին ներառում է նաև հրատարակվելիք վիճակագրական ժողովածուների, տեղեկագրերի և այլ հրատարակումների ցանկը և պարբերականությունը:

Վիճակագրական տեղեկատվություն սպառողների ուշադրությանը ներկայացվող «**Վիճակագրական հրատարակումների համացանկ, 2011**»-ը, որպես Ծրագրի վերոնշյալ մասի լրացում, նպատակ ունի հանրությանն առավել մանրամասնեցված տեղեկատվություն տրամադրել 2010թ. վիճակագրական հրատարակումների ցանկի, դրանց պարբերականության և համառոտ բովանդակության վերաբերյալ:

Dear reader, the National Statistical Service of NKR (NSS NKR) has launched developing and publishing of "CATALOGUE of Statistical Publications, 2011" to create advantageous conditions for statistical information users to use the statistical publications more efficiently.

According to the 11 Article of NKR Law "On State Statistics", the State Statistical Work Program is the basis for implementation of state statistics on the territory of the Republic of Nagorno-Karabakh. The Program includes statistical information necessary for the observation of the economic, demographic, social and environmental situation in country, taking into account the availability of resources, the burdens on respondents and the cost-effectiveness.

The program is developed by NSS NKR based on the study of the demand of statistical information users and along with other components also includes the list of statistical handbooks, bulletins and other publications, that should be published and their periodicity.

The "CATALOGUE of Statistical Publications, 2011" presented to attention of statistical information users, as an addition to the above-mentioned part of the Program, aims to provide the public with the most detailed information on list, periodicity and brief content of 2010 statistical publications.

Վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ:

Բոլոր հրատարակումների (նաև էլեկտրոնային արտադրանքի) հեղինակային իրավունքը պատկանում է ԼՂՀ ԱՎԾ-ին: Վիճակագրական նյութերի օգտագործման դեպքում պարտադիր է ԼՂՀ ԱՎԾ վկայակոչումը (հղումը):

ԼՂՀ ԱՎԾ-ն շնորհակալ է տվյալների տրամադրման գործընթացում համագործակցող բոլոր գործընկերներին, տվյալներ տրամադրողներին և սպառողներին:

Վիճակագրական տեղեկատվությունը կատարելագործելու նպատակով ԼՂՀ ԱՎԾ-ն ակնկալում է սպառողների հետադարձ արձագանքը:

Մ.ՄԻՆԱՍՅԱՆ

ԼԵՈՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԳԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Statistical department of International Monetary Fund (IMF) developed General Data Dissemination System (GDDS) and Special Data Dissemination Standard(SDDS) on purpose to ensure quality, transparency of statistical information and data comparability and to inform the international public about wider possibility of their use, applying methodology and its further development of projects.

The copyright on all publications (and electronic product) is owned by NSS NKR. In case of use of the statistical materials the reference to NSS NKR is obligatory.

We would like to thank you all the partners cooperating with us in the process of producing data, data providers and users.

The NSS NKR is grateful to get users feedback and suggestions to improve the availability of statistical information.

M.MINASYAN

PRESIDENT
NATIONAL STATISTICAL SERVICE OF
NAGORNO-KARABAKH REPUBLIC

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

CONTESTS

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7	INTRODUCTION
ԼՂՀ ԱՎԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	9	THE ACTIVITY OF NSS NKR IN THE FIELD OF PUBLICATIONS AND INFORMATION DISSEMINATION
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ	11	STATISTICAL HANDBOOKS
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ	26	INFORMATIONAL REPORTS
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՆԵՐ	28	STATISTICAL REPORTS
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ	33	STATISTICAL BULLETINS
ՕՊԵՐԱՏԻՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	35	OPERATIVE INFORMATION
ՍԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	36	PRESS RELEASES

«Վիճակագրություն» տերմինը ծագել է լատինական «status» բառից, որը նշանակում է երևույթի վիճակ, դրություն: Այս տերմինը միանշանակ չէ: Նախ և առաջ, «վիճակագրություն» նշանակում է հասարակական կյանքի քանակական տարբեր կողմերը (արտադրություն, արդյունքի բաշխում և փոխանակում, քաղաքականություն, մշակույթ, առողջապահություն, բնակչության կենսամակարդակ և այլն) բնութագրող ամփոփ ցուցանիշների ամբողջություն:

«Վիճակագրություն» նշանակում է նաև համապատասխան տվյալների հավաքագրման և ընդհանրացման գործընթաց: Այն գիտություն է, որն արտացոլում է երևույթների «վիճակների նկարագրությունը (փաստումը)»՝ թվային տվյալներով:

Վիճակագրությունը բնութագրվում է մյուս ոլորտների համեմատ առաջանցիկ զարգացմամբ, տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, երկրի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական ցուցանիշները բովանդակող տեղեկատվության նկատմամբ պահանջարկի մշտական աճով:

Պետական վիճակագրությունը պետական վիճակագրություն իրականացնող մարմնի՝ ԼՂՀ ԱՎԾ գործունեությունն է, ուղղված սոցիալ-տնտեսական, հասարակական երևույթների և գործընթացների որակական և քանակական հարաբերությունների ժամանակի և տարածության որոշակի պայմաններում դրսևորվող օրինաչափությունների թվային բնութագրմանը:

Երկրի ազատական տնտեսակարգին անցման պայմաններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական բարեփոխումները, տնտեսությունում իրականացվող արագ տեղաշարժերը սկզբունքային անհրաժեշտություն են առաջացնում վիճակագրական տեղեկատվության սպառողներին ապահովելու առավել ճշգրիտ, արժանահավատ և ժամանակի չափանիշներին համապատասխանող վիճակագրական տեղեկատվությամբ, որը հնարավոր է իրականացնել միայն նրանց պահանջարկի ուսումնասիրության,

The term "statistics" originates from the Latin word "status", which means the state, situation of phenomenon. This term hasn't a single meaning. First of all, "statistics" means completeness of overall indicators characterizing the different quantitative sides of public life (production, output distribution and exchange, policy, culture, health, living standards and etc).

"Statistics" also means the process of appropriate data collection and summarizing. This is the science, which reflects the "states' description (arguing)" of phenomena in numeral data

The statistics is characterized by exceeding development in comparison with the other spheres, by necessity of regular improvement of data collection, processing, summarizing methodology, as well as by continuous growth of the demand for information containing economic, social, demographic and environmental indicators of the country.

State statistics is an activity to be implemented by the state statistics body (NSS of NKR) directed to the numerical characterizing of regulations of qualitative and quantitative relations of socio-economic, public phenomena and processes under the definite conditions of the time and space.

Social and economic reforms in transition to liberal economic system in the country, the rapid movements in the economy make indispensable the provision of the statistical information users with more accurate, reliable statistical information that also correspond to the standards of the current time. It is possible to implement only based on study of their demands, maintaining of capable and reliable information base, which correspond to the

վիճակագրության միջազգային նորմերին համապատասխանող տարողունակ, վստահություն վայելող տեղեկատվական բազայի վարման հիման վրա: Այս ամենի սպահովումը ենթադրում է տվյալների հավաստիություն, դիտարկման դաշտի ամբողջական ընդգրկվածություն, օպերատիվություն:

Վիճակագրական տվյալներն օգտագործվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար և գիտակրթական շրջանների, քաղաքական և այլ հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների, ինչպես նաև երկրի և միջազգային հանրության կողմից: Որպես հանրային շահ հետապնդող մարմին, ԼՂՀ ԱՎԾ-ն վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) ցանկը չի սահմանափակում:

Վիճակագրական տվյալների տարածումը ներառում է բազմաբնույթ խնդիրների կատարում, վերլուծական նյութերի և վիճակագրական հրատարակումների տարածում, ինչպես նաև դրանց էլեկտրոնային կրիչներով կամ էլեկտրոնային փոստով տրամադրում:

Տվյալների արժանահավատությունը հնարավոր է «տեղեկատվություն տրամադրող-վիճակագիր» երկկողմանի փոխադարձ վստահության և հարգանքի վրա հիմնված հարաբերությունների առկայության դեպքում: Տեղեկատվության օպերատիվության սպահովումն ենթադրում է սպառողներին պահանջվող որակի և ծավալի տեղեկատվության տրամադրում՝ սահմանված ժամկետներում, մշակված ձևով: Արդի տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում հաշվի առնել սպառողների ցանկացած պահանջմունք: Սակայն այդ բնագավառում ԼՂՀ ԱՎԾ-ն, ինչպես և ցանկացած երկրի վիճակագրական ծառայություն, անխուսափելիորեն բախվում է ռեսուրսների (ֆինանսական, կադրային և այլն) իրական սահմանափակումների բարդության:

international standards. The ensuring of all those implies the reliability of data, complete coverage of observation field and efficiency.

The statistical data are used by state and local self-government bodies, business, scientific and educational spheres, political and other public organizations, mass media, as well as by country's and international society. As a body acting for public interests, the NSS NKR doesn't restrict the list of statistical information users.

Distribution of statistical data includes implementation of various tasks: distribution of analytical materials and statistical publications, as well as their provision on diskettes and by electronic mail.

The reliability of data could be caused by of availability of bilateral relations of "information provider-statistician" based on mutual confidence and respect. Ensuring of information efficiency implies the provision of users with required quality and volume information, in define time and form. Modern information technologies allow to consider every need of users. However, in this field, the NSS NKR, like statistical service in any other country, unavoidably faces complex of real restrictions of resources (financial, personnel, etc).



ԼՂՀ ԱՎԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

THE ACTIVITY OF NSS NKR IN THE FIELD
OF PUBLICATIONS AND INFORMATION DISSEMINATION

Համընդհանուր գլոբալիզացիայի և շուկաների միջազգայնացման տեմպերի արագացման պայմաններում, տեղեկատվությունը վերածվել է ամենաթանկ ապրանքի, ինչն ինքնին ենթադրում է առավել թանկարժեք տեղեկատվություն թողարկող վիճակագրական համակարգի զարգացման առաջանցիկ տեմպեր ապահովելու անհրաժեշտություն:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից է սպառողներին (օգտագործողներին) իրենց պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանք տրամադրելը: Վիճակագրության կատարելագործման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական տեղեկատվության

Under the conditions of entire globalization and speeding of markets internationalization, the information was turned into the most expensive product that is indispensable for providing the exceeding development rates for the statistical system producing the most valuable information.

One of the key objectives of statistics is to provide consumers (users) with the statistical product that corresponds to their needs. One of the priority directions of development of statistics is to update the statistical information dissemination experience and policy of its implementation and the application of new approaches in this field.

փորձի և դրա վարման քաղաքականության նորացումն ու այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումն է:

Պարբերական վիճակագրական հրատարակումները, ներառյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը տեղեկատվական եռամսակային զեկույցները, վիճակագրական ժողովածուները, տարեգրքերը, գրքույկները, վիճակագրական զեկույցները, վիճակագրական տեղեկագրերը և այլն, հրատարակվում են ԼՂՀ ԱՎԾ-ի կողմից:

ԼՂՀ ԱՎԾ-ն տնօրինում է իր բոլոր հրատարակումների (նաև էլեկտրոնային արտադրանքի) հեղինակային իրավունքը: Վիճակագրական նյութերի օգտագործման դեպքում պարտադիր է ԼՂՀ ԱՎԾ վկայակոչումը (հղումը):

Periodical statistical publications, including "Socio-economic Situation of Nagorno-Karabakh Republic" informational quarter reports, statistical handbooks, yearbooks, booklets, reports, statistical bulletins and etc. are published by NSS of NKR.

The NSS of NKR owns the copyright on all its publications (including electronic product). In case of use of the statistical materials the reference to NSS of NKR is obligatory.

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐԶ,
2004-2010»



Լեզուն՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն
Չևաչափ՝ PDF, քղթային

Թողարկման ժամկետը՝ IV եռամսյակ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, 2004-2010» վիճակագրական ժողովածուն ԼՂՀ ԱՎԾ առավել ամբողջական վիճակագրական հրապարակումն է, որն արտացոլում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը: Ժողովածուի մեջ ներկայացված են վիճակագրական տվյալներ ԼՂՀ 2004-2010թթ. սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ: Ներառված են երկրի ողջ տնտեսության, դրա կարևորագույն ճյուղերի և հատվածների վիճակը բնութագրող բազմաթիվ աղյուսակներ: Որոշ ցուցանիշներ ներկայացված են ԼՂՀ շրջանների կտրվածքով:

Ներկայացված են նաև տեղեկություններ միջազգային համեմատությունների վերաբերյալ: Տարեգրքում յուրաքանչյուր բաժնի վերջում ներառված են որոշ տնտեսական ցուցանիշների գծապատկերներ:

Տվյալները հաշվարկվում են վիճակագրության արդի մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է ընձեռում դրանք համադրել այլ երկրների համանման ցուցանիշների հետ: Նախկինում հրապարակված որոշ ցուցանիշներ ճշգրտված են:

Տարեգիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար:

“STATISTICAL YEARBOOK OF NAGORNO-KARABAKH
REPUBLIC, 2004-2010”

Language available: Armenian, English, Russian

Format PDF, paper

Issue: IV quarter

“Statistical Yearbook of Nagorno-Karabakh Republic, 2004-2010” is the most complete statistical publication of the National Statistical Service of NKR, reflected socio-economic situation of the country.

The yearbook covered statistical data on socio-economic situation of the Republic of Nagorno-Karabakh for 2004-2010. It included numerous tables characterising the economy in a whole and its most important branches and sectors. Some indicators are presented by NKR regions.

Information on international comparisons was presented as well. Some diagrams on economic indicators were included at the end of each section of the yearbook.

The data are calculated in accordance with the principles of modern methodology, which enables to compare them with similar indicators of other countries. Some indicators published and adjusted.

The yearbook is intended for the wide circle of readers.

«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ
ԹՎԵՐՈՎ, 2004-2010»



*Լեզուն՝ հայերեն, ռուսերեն
Ձևաչափ՝ PDF, քղապիմ*

Թողարկման ժամկետը՝ IV եռամսյակ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով 2004-2010» ժողովածուն առավել ամբողջական վիճակագրական հրապարակումն է ԼՂՀ շրջանների սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ՝ 2004-2010թթ. դինամիկ շարքերով:

Սույն հրապարակումը ներկայացնում է մանրամասն վիճակագրական տեղեկատվություն տարածաշրջանային կտրվածքով:

Հատվածներով ընդգրկված են ցուցանիշներ շրջանների աշխարհագրական բնութագրերի, ժողովրդագրության, բնակչության զբաղվածության, տնտեսության ճյուղերի, սոցիալական ոլորտի, արտաքին տնտեսական գործունեության, ֆինանսների, գների ու սակագների և այլնի վերաբերյալ:

Ժողովածուն բաժանվում է երկու հատվածի՝ առաջինում վիճակագրական ցուցանիշների դինամիկ շարքերն են, որոնք ընդգրկում են տեղեկատվություն տնտեսության առանձին հատվածների, սոցիալական ոլորտի և այլնի վերաբերյալ, իսկ երկրորդ հատվածում ներկայացվում են ԼՂՀ բոլոր շրջանների սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները:

Ժողովածուն նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար:

**“REGIONS OF NAGORNO-KARABAKH REPUBLIC
IN FIGURES, 2004-2010”**

Language available: Armenian, Russian

Format: PDF, paper

Issue: IV quarter

“Regions of Nagorno-Karabakh Republic in Figures, 2004-2010” statistical handbook is the most complete statistical publication on socio-economic situation of NKR regions with time series for 2004-2010. This publication is intended to present detailed statistical information on regions.

Sections cover indicators on geographic characteristic, demography, employment of population, branches of economy, social sphere, external economic activity, finance, prices and tariffs of regions and etc.

The handbook divided into 2 parts. The first part included the time series of statistical indicators, that covered information on separate branches of economy, social spheres and etc., and the second part represented the main indicators characterising socio-economic situation of all NKR regions.

Handbook is intended for the wide circle of readers.

«ԼԵՈՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԹՎԵՐՈՎ, 2011»



*Լեզուն՝ հայերեն, անգլերեն
Չնաչափ՝ թղթային
Թողարկման ժամկետը՝ II եռամսյակ*

«Լեռնային Ղարաբաղը քվերով, 2011»

Վիճակագրական գրքույկն ընթերցողին ներկայացնում է հակիրճ վիճակագրական տեղեկատվություն ԼՂՀ 2010թ. սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ՝ 2009թվականի համեմատությամբ: Առկա են նաև 5-6 տարիների դինամիկ շարքեր:

Գրքույկն ընդգրկում է երկրի ժողովրդագրական գործընթացները, աշխատանքի շուկան, սոցիալական ոլորտը և բնակչության կենսամակարդակը, ներքին առևտուրը, ֆինանսական վիճակը, արտաքին տնտեսական գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշները:

Ներկայացվում է տեղեկատվություն ըստ տնտեսության առանձին հատվածների: Առանձին հատվածով ներկայացվում են ԼՂՀ շրջանները բնութագրող հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները:

Տվյալները հաշվարկված են վիճակագրության արդի մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է ընձեռում դրանք համադրել այլ երկրների համանման ցուցանիշների հետ:

Որոշ բաժիններ համալրվել են նոր աղյուսակային նյութերով: Նախկինում հրատարակված որոշ ցուցանիշներ ճշգրտվել են:

“ NAGORNO-KARABAKH IN FIGURES, 2011”

Language available: Armenian, English

Format: paper

Issue: II quarter

“Nagorno-Karabakh in Figures, 2011” statistical booklet provides reader with brief statistical information on socio-economic situation of NKR for 2010 compared to 2009. Time series for 5-6 years is available as well.

The booklet includes the main indicators characterising demographic processes, labour market, social sphere and living standards of population, domestic trade, financial situation, external economic activity of the country.

Information by separate branches of economy is presented. Separate chapter represented main socio-economic indicators characterising NKR regions.

Data was calculated based on the up-to-date statistical methodology principles, which enable to compare them with the similar indicators of other countries.

Some chapters were complemented with new tables. Previously published some indicators were adjusted.

«ԱՐՑԱՆԻ ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՂԱՄԱՐՂԻԿ, 2011»

*Լեզուն՝ հայերեն, անգլերեն
Ձևաչափ՝ քոթային
Թողարկման ժամկետը՝ IV եռամսյակ*



«Արցախի կանայք և տղամարդիկ, 2011»

Վիճակագրական գրքույկը լուսաբանում է կին-տղամարդ հարաբերակցությունները ԼՂՀ-ում, հասարակական կյանքում նրանց հնարավորությունների օգտագործման ներկա վիճակը և անհրաժեշտ տեղեկատվական բազա է ապահովում պետական գեղեղերային (կանանց և տղամարդկանց համար իրավահավասարության պայմաններ ապահովող) քաղաքականության մշակման համար:

Վիճակագրության մեջ կանայք և տղամարդիկ պետք է «տեսանելի» լինեն: Գեղեղերային վիճակագրությունը հասարակության մեջ կանանց և տղամարդկանց տեղն ու դերն արտացոլող վիճակագրություն է, որը թույլ է տալիս հաշվի առնել ինչպես կանանց և տղամարդկանց առանձնահատկություններն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի, այնպես էլ իրականացնել իրավահավասարության և հավասար հնարավորությունների սկզբունքը: Սույն հրատարակության մեջ գետեղված աղյուսակներում և գծապատկերներում արտացոլված են կանանց և տղամարդկանց թվաքանակը բացարձակ թվերով և համամասնություններն ըստ որոշակի հատկանիշների:

“WOMEN AND MEN IN ARTSAKH, 2011”

Language available: Armenian, English

Format: paper

Issue: IV quarter

“Women and Men in Artsakh, 2011” statistical booklet highlights the ratio between women and men in NKR, current situation of using their opportunities in social life and provides with a necessary information base for development of state gender policy (insuring equal conditions for women and men).

Women and men are to be visible in statistics. Gender statistics reflects the role of women and men in the society, which allows not only to take into account the peculiarities of women and men, by social-demographic groups but carry out the principle of equal rights and equal possibilities. The tables and graphs of this booklet give absolute numbers and proportions for certain attributes among women and men.

«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, 2010»

Լեզուն՝ հայերեն

Ձևչափ՝ PDF, քղբային

Թողարկման ժամկետը՝ II եռամսյակ



«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը, 2010» ժողովածուն պարունակում է վիճակագրական տեղեկություններ պետական ֆինանսների, կազմակերպությունների ֆինանսների մասին, բանկային համակարգը բնութագրող վիճակագրական տվյալներ, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթների հաշվարկային փոխարժեքներ և ապահովագրական ընկերությունների գործունեության մասին ցուցանիշներ: Պետական ֆինանսների վիճակագրության տեղեկատվական բազան ձևավորված է ԼԳՀ ֆինանսների միախառնության կողմից ԼԳՀ ԱՎԾ տրամադրած պետական և համայնքների բյուջեների կատարման հաշվետվությունների

հիման վրա: Կազմակերպությունների ֆինանսների վիճակագրությունը ներառում է ԼԳՀ ԱՎԾ կողմից ընտրանքային կարգով ընտրված հանրապետության խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների, վճարունակության, միջոցների կազմի, ինչպես նաև հաշվարկների վիճակի վերաբերյալ տեղեկատվություն: Տվյալների հավաքագրումն իրականացվում է պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով: Բանկային համակարգի վիճակագրության ցուցանիշները ներկայացվում են ըստ ԼԳՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված տվյալների: Ապահովագրական ընկերությունների գործունեությունը բնութագրող առանձին ցուցանիշներ ներկայացված են ըստ դրանց տրամադրած տվյալների:

“FINANCE STATISTICS OF NAGORNO-KARABAKH
REPUBLIC 2010”

Language available: Armenian

Format: PDF, paper

Issue: II quarter

“Finance Statistics of Nagorno-Karabakh Republic, 2010” statistical handbook includes statistical information on state finances, organizations finances, statistical data characterizing banking system, as well as exchange rates and indicators concerning the activity of the insurance companies determined by the Central Bank of RA.

The information base of the state finance statistics is formed based on reports of state and communities budget performance provided by the Ministry of Finance of NKR to the NSS NKR . Finance statistics of organizations includes information on financial results of activity, solvency, structure of funds, as well as calculations of large and medium-sized commercial organizations of the republic selected through sampling method by the NSS NKR. Data collection is implemented through the state statistical reports. Indicators on bank system statistics are presented according to the data provided by the Commercial Banks of NKR. Separate indicators characterizing the activity of the insurance companies are presented according to their provided data.

**«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԱՌՆ
ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ, 2010»**



*Լեզուն՝ հայերեն
Չևաչափ՝ PDF, քղթային
Թողարկման ժամկետը՝ II եռամսյակ*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համախառն ներքին արդյունքը, 2010» վիճակագրական ժողովածուն հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում համախառն ներքին արդյունքի արտադրության, ըստ տնտեսության ճյուղերի կառուցվածքի և եռամսյակային համամասնությունների վերաբերյալ առավել ամբողջական հրատարակությունը:

Ժողովածուն ընդգրկում է տեղեկություններ համախառն ներքին արդյունքի արտադրության ծավալների, կառուցվածքի, աճի տեմպի, ձևավորման աղբյուրների վերաբերյալ:

Ժողովածուն պատրաստվում է ԼՂՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների վիճակագրական տեղեկատվության, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներից, այլ կազմակերպություններից, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից և բնակչությունից ստացված տվյալների հիման վրա՝ վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման և մշակման, ընտրանքային հետազոտությունների անցկացման, «դիտարկվող տնտեսության» լրահաշվարկների և այլ վիճակագրական դիտարկումների միջոցով:

**«GROSS DOMESTIC PRODUCT
OF NAGORNO-KARABAKH REPUBLIC, 2010»**

*Language available: Armenian
Format: PDF, paper
Issue: II quarter*

«Gross Domestic Product of Nagorno-Karabakh Republic, 2010» statistical handbook is the most complete publication on the System of Gross Domestic Product of Nagorno-Karabakh Republic, according to the structure of economical branches and the quarterly models and indicators related to the System.

The handbook covers information on the Gross Domestic Product output volumes, structure, growth rate, formation sources.

The handbook is prepared based on the statistical information from the NSS NKR divisions, as well as data received from economic units, other organizations, state, local self-government bodies and population, through the collection and processing of statistical reports, sample surveys, imputation of ‘non-observed economy’ and other statistical observations.

«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, 2010»



*Լեզուն՝ հայերեն
Չեաչափ՝ PDF, քղթային
Թողարկման ժամկետը՝ II եռամսյակ*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերությունը, 2010» վիճակագրական ժողովածուն բովանդակում է տեղեկություններ 2010թ. հանրապետության արդյունաբերության մասին, տվյալների մեծ մասը ներկայացված են հինգ տարվա կտրվածքով, ինչը հնարավորություն է տալիս դիտարկել դրանց դինամիկան:

Ժողովածուի մեջ արդյունաբերությունը բնութագրող վիճակագրական ցուցանիշները ներկայացված են ըստ տնտեսական գործունեության տեսակների, տնտեսության առանձին ճյուղերի և շրջանային բաշխվածության:

Ժողովածուն կազմվել է հավաքագրված վիճակագրական հաշվետվությունների և իրականացված դիտարկումների տվյալների հիման վրա:

“INDUSTRY OF NAGORNO-KARABAKH REPUBLIC, 2010”

*Language available: Armenian
Format: PDF,paper
Issue: II quarter*

“*Industry of Nagorno–Karabakh Republic, 2010*” statistical handbook included data concerning Republic industry of 2010 large part of which was presented with an interval of five years , that gave the possibility to watch its dynamics.

Statistical indices characterising the industry in handbook presented by economic activities , kinds of special branches of economic and by regional distributions.

The handbook was made on the basis of the collected statistical reports and the carried out monitorings.

**«ԼԵՈՆԱՅԻՆ ԳԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, 2010»**



*Լեզուն՝ հայերեն
Ձևաչափ՝ PDF, բրդրային
Թողարկման ժամկետը՝ II եռամսյակ*

«Լեռնային Գարաբաղի Հանրապետության գյուղատնտեսությունը, 2010» վիճակագրական ժողովածուն բովանդակում է հանրապետության գյուղատնտեսության ոլորտում առկա իրավիճակը և զարգացումների միտումները արտացոլող տեղեկատվություն:

Ժողովածուն վիճակագրական տեղեկատվություն է ներկայացնում Լեռնային Գարաբաղի Հանրապետության բոլոր կարգի տնտեսությունների գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, դրանց համախառն բերքի և միջին բերքատվության, անասունների գլխաքանակի, անասնապահական մթերքների արտադրության, գյուղատնտեսական տեխնիկայի առկայության, դրանց սարքինության մակարդակի մասին:

Ժողովածուն կազմվել է հանրապետության համայնքների և գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված վիճակագրական հաշվետվությունների տվյալների հիման վրա:

“AGRICULTURE OF NAGORNO – KARABAKH REPUBLIC, 2010”

*Language available: Armenian
Format: PDF,paper
Issue: II quarter*

“Agriculture of Nagorno – Karabakh Republic, 2010” statistical handbook includes data concerning Republic agriculture, which reflects the information of current situation and different developments tendencies in this sphere .

Handbook represented all kinds of economy of NKR , agricultural places for plant growing fields under crops, gross harvest and average productivity, a cattle livestock, fodder fields, availability of agricultural machinery and their good working order.

Handbook was made on the basis of collected statistical reports of communities of Republic and commercial organizations engaged in agricultural production.

«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ, 2010»



*Լեզուն՝ հայերեն
Չևաչափ՝ PDF, քղթային
Թողարկման ժամկետը՝ II եռամսյակ*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շինարարությունը, 2010» վիճակագրական ժողովածուն բովանդակում է տվյալներ հանրապետությունում ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված շինարարության ծավալների, հիմնական միջոցների գործարկման, շինմոնտաժային աշխատանքների ծավալների և բնակելի շենքերի, սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների գործարկման, ինչպես նաև

հիշատակված ցուցանիշների՝ ըստ գործունեության տեսակների, ըստ շրջանային բաշխվածության բնութագրի վերաբերյալ:

Ժողովածուն կազմվել է հավաքագրված վիճակագրական հաշվետվությունների և իրականացված դիտարկումների տվյալների հիման վրա:

“CONSTRUCTION OF NAGORNO – KARABAKH REPUBLIC, 2010”

Language available: Armenian

Format: PDF, paper

Issue: II quarter

